ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, Հեռ. (094) 519030
, hatsavan.kotayk@mta.gov.am

N 162
19 հոկտեմբեր 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ
<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ավագանու 2017թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 10 արտահերթ նիստի որոշումները:
Առդիր՝ 8 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Թաչատրյան
Հեռ./093-212366/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 33-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով համայնքի ավագանին

որոշում է

Հաստատել Կոտայքի մարզի Հացավան համայնքի ավագանու 2017թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը:
1. Հացավան համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկման մասին:
2. 2017թվականի Կոտայքի մարզի Հացավան համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և Կոտայքի մարզի Հացավան համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 15-ի N 36-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
3. 2017թվականի համար Կոտայքի մարզի Հացավան համայնքի կամավոր խնդիրների իրականացման կարգը սահմանելու և Կոտայքի մարզի Հացավան համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 13-ի N 03-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԴԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34-Ա

ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի պահանջով,հիմք ընդունելով Կոտայքի մարզպետարանի իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքնային խմբի 2017թվականի սեպտեմբերի 23-ի 19 արձանագրությունը համայնքի ավագանին

որոշում է

1. Ի գիտություն ընդունել Կոտայքի մարզպետարանի կողմից Հացավան համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին հետևողական լինել արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ տրված հանձնարարականների արդյունավետ և որակով կատարման հարցում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԴԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35-Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15_Ի N 36_Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով,<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի
3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով համայնքի ավագանին

որոշում է

1. Սահմանել
2017թվականի համար Կոտայքի մարզի Հացավան համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Հացավան համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 15-ի <<Կոտայքի մարզի Հացավան համայնքի տարածքում 2017թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> N 36-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐՊԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Հացավան համայնքի ավագանու
2017թ. հոկտեմբերի 18-ի N 35-Ն որոշման

ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հացավան համայնքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ.սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *երեսուն հազար դրամ,*

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *հիսուն հազար դրամ,*

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *հիսուն հազար դրամ,*

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *հարյուր հազար դրամ,*

գ.ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *երեք հազար դրամ,*

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *հինգ հազար դրամ.*

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա.չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ *երեք հազար դրամ,*

բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ.նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը.

3)համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ *հինգ հազար դրամ.*

4)համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ *երկու հարյուր հազար դրամ.*

5)համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ *վաթսուն հազար դրամ.*

6)համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ *հիսուն հազար դրամ.*

7)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *մեկ հազար դրամ,*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *հինգ հազար մեկ հարյուր դրամ,*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *վեց հազար յոթ հարյուր դրամ,*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *տաս հազար հինգ հարյուր դրամ,*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *քսաներկու հազար հինգ հարյուր դրամ,*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *քառասունհինգ հազար դրամ.*

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *հազար հինգ հարյուր դրամ,*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *հինգ հազար վեց հարյուր դրամ,*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *վեց հազար յոթ հարյուր դրամ,*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *տաս հազար հինգ հարյուր դրամ,*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *քսաներկու հազար հինգ հարյուր դրամ,*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *քառասունհինգ հազար դրամ.*

8)իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝*երեք հարյուր հիսուն դրամ* մեկ քառակուսի մետրի համար.

9)համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ *հինգ հազար դրամ,*

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ *քսանհինգ հազար դրամ,*

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ *երկու հարյուր հազար դրամ,*

դ. խաղատների համար՝ *հինգ հարյուր հազար դրամ,*

ե. շահումով խաղերի համար՝ *երկու հարյուր հիսուն հազար դրամ,*

զ. վիճակախաղերի համար՝ *հարյուր հազար դրամ.*

10)համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *երկու հազար հինգն հարյուր դրամ,*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *հինգ հազար դրամ,*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *յոթ հազար հինգ հարյուր դրամ,*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *տաս հազար դրամ,*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *տասնհինգ հազար դրամ,*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *քսան հինգ հազար դրամ.*

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *հինգ հարյուր դրամ,*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *մեկ հազար դրամ,*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *երկու հազար դրամ,*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *չորս հազար դրամ,*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *յոթ հազար հինգ հարյուր դրամ,*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *տասներկու հազար հինգ հարյուր դրամ*

11)ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ *մեկ հազար դրամ,*

բ.թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ *հազար յոթ հարյուր հիսուն դրամ,*

գ.սոցիալական գովազդի համար՝ *զրո դրամ,*

դ.այլ արտաքին գովազդի համար՝ *յոթհարյուր հիսուն դրամ,*

ե.դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12)համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ *հարյուր հազար դրամ.*

13)համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ *հինգ հազար դրամ.*

14)համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ *հինգ հարյուր հազար դրամ.*

15)համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա.3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,*

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *հինգ միլիոն դրամ,*

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *յոթ միլիոն դրամ,*

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *տասը միլիոն դրամ.*

2. Հացավան համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար դրամ,*

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար դրամ,*

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար դրամ.*

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հիսուն հազար դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *հինգ հազար դրամ.*

6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել

ա.կենցաղային աղբի համար՝ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ամսեկան *տաս դրամ.*

բ. Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի մեկ խորանարդ մետրի համար՝ երկու հազար դրամ, ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ *տաս հազար դրամ.*

7) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանել մեկ խորանարդ մետրի համար *հինգ հարյուր դրամ*

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ *հինգ հարյուր դրամ.*

9) համայնքի տարածքում նոր առաջացած գույքին հասցե տրամադրելու համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխ.հատուցման վճար սահմանել *հինգ հազար դրամ.*

3.Սույն հավելվածի 1-ին կետի 7-րդ , 10-րդ, 11-րդ, 13-րդ ենթակետերում դրույքաչափերը հաշվարկվել են 0,5 գործակցի կիրառմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36-Ա

2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13_Ի N 03-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի
1-ին կետի <<բ>> ենթակետով համայնքի ավագանին

որոշում է

1. Սահմանել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի կամավոր խնդիրները,կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը 2017թվականի համար՝
1) սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման նպատակով՝
ա. մինչև 70 000 /յոթանասուն հազար/ դրամ գումարի տրամադրումը վերապահել համայնքի ղեկավարին.
բ. 70 000 /յոթանասուն հազար/ դրամ գումարից ավելի ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:
2) համայնքի տարբեր բնագավառներում սեփական լիազորություններն իրականացնել 2017թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին՝
ա. մինչև 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ ծախս պահանջող աշխատանքների կատարումը վերապահել համայնքի ղեկավարին.
բ. 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամից ավելի ծախս պահանջող աշխատանքների դեպքում հարցը քննարկել համայքնի ավագանու նիստում:
2. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Հացավան համայքնի ավագանու 2017թվականի հունվարի 13-ի<<Կոտայքի մարզի Հացավան համայնքի ղեկավարի կողմից 2017թ.ընթացքում կամավոր լիազորությունների իրականացնման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին>> N 03-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԳԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ